

ՀՏՁՀ «Ջրային տնտեսության ծրագրերի  
իրականացման մասնաձյուղ»

---

ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ  
ԾՐԱԳԻՐ

Լուս 2

«Կոտայք, Գեղարքունիք, Շիրակ, Թալին, Եղեգնաձոր և  
Սյունիք ՋՕԸ-երի սպասարկման տարածքների ոռոգման  
համակարգերի վերականգնման նախագծում և  
հեղինակային հսկողություն»

Պայմանագիր № ISMP/CQS/SW – 21/002

Գեղարքունիքի մարզի Ծովինար համայնքի  
Մեծ առու ջրանցքի վերակառուցում

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	3
2. ԻՐԱՎԱԿԱՆ և ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ .....	4
<b>2.1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանն ու կառավարմանն առնչվող ՀՀ օրենսդրություն</b> .....	4
<b>2.2. Միջազգային համաձայնագրեր</b> .....	10
3. ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ .....	11
<b>3.1. Տեղադիրքը</b> .....	11
<b>3.2. Կլիմայական պայմանները</b> .....	11
<b>3.3. Օդային ավազան</b> .....	15
<b>3.4. Ջրային ռեսուրսներ</b> .....	15
<b>3.5. Հողածածկ</b> .....	16
<b>3.6. Կենսաբազմազանություն</b> .....	24
<b>3.7. Սոցիալական պայմանները</b> .....	27
<b>3.8. Պատմամշակութային հուշարձաններ</b> .....	28
4. ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	28
<b>4.2.1. Շինարարության կազմակերպման համառոտ նկարագիր</b> .....	31
<i>Շինարարության տևողությունը</i> .....	34
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....	37
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 1. Բնապահպանական կառավարման պլան (ԲԿՊ)</b> .....	40
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 2. Բնապահպանական մոնիթորինգի պլան</b> .....	48
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 3. Համայնքի գրությունը</b> .....	51
<b>Հավելված 4. Հանրային քննարկումներ</b> .....	52

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն նախնական գնահատման հայտը կազմված է «Կոտայք, Գեղարքունիք, Շիրակ, Թալին, Եղեգնաձոր և Սյունիք ՋՕԸ-երի սպասարկման տարածքների ոռոգման համակարգերի վերականգնման նախագծում և հեղինակային հսկողություն» ծրագրով նախատեսված ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար համայնքի Մեծ առու ջրանցքի վերակառուցման աշխատանքների համար: Հսկողության աշխատանքների իրականացնող և սույն հայտի ձեռնարկող է հանդիսանում «ՀԳՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Ծրագիրն իրականացվում է «Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի» (ՈՀԱԾ՝ «Ծրագիր») շրջանակներում Եվրասիական բանկի կողմից կառավարվող Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի (ԿՁԵՀ) կողմից տրամադրած ֆինանսավորմամբ: ՈՀԱԾ-ի նպատակն է՝ Հայաստանի ոռոգման ենթակառուցվածքների արդիականացումը և արդյունավետության բարձրացումը՝ կատարելով որոշ մայր և երկրորդ կարգի ջրանցքների վերականգնում, կրճատելով շահագործման և պահպանման ծախսերը, կրճատելով ոռոգման ջրի կորուստները, բարձրացնելով ջրօգտագործողների ընկերությունների (ՋՕԸ-ներ) աշխատանքի արդյունավետությունը:

Ծրագրի շինարարական աշխատանքների բյուջեի իրական վիճակի վերլուծությունը ցույց է տվել վարկային միջոցների արդյունավետ օգտագործում, ինչի շնորհիվ որոշվել է Ծրագրում ներառել ոռոգման համակարգերի վերականգնման լրացուցիչ նոր օբյեկտներ:

Սույն Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել նախագծում և հեղինակային հսկողություն 6 ՋՕԸ-ների 15 ոռոգման օբյեկտների համար: Սույն ենթածրագիրը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) հոդված 14-ի կետ 6-ի համաձայն, ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության (300մմ-ից ավելի տրամագծով խողովակների կիրառում, որոնց երկարությունը 1 կմ-ից ավել է):

Ըստ շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանի, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի, որի համար պահանջվում է Նախնական գնահատման հայտի (ՆԳՀ) պատրաստում, որի համար բնապահպանական փորձքննության գործընթացը կազմակերպվելու է մեկ փուլով՝ նախնական գնահատման հայտի հիման վրա «Ջրային կոմիտեն» (ՋԿ)

պատասխանատու կլինի ՈՀԱԾ-ի ընդհանուր ղեկավարության, իսկ «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը» («ՀՏԶՀ») «ՀՏԶՀ «Զրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղի» (ՀՏԶՀ «ԶՏԻՄ») միջոցով՝ ծրագրի իրականացման համար:

## 2. ԻՐԱՎԱԿԱՆ և ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

### 2.1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանն ու կառավարմանն առնչվող ՀՀ օրենսդրություն

Շրջակա միջավայրի խնդիրները կարգավորվում են ՀՀ սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով, ոլորտային օրենսգրքերով, օրենքներով և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով

1995թ. ընդունվեց ՀՀ Սահմանադրությունը, որի 10-րդ հոդվածը սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության և վերարտադրության, բնական պաշարների բնական օգտագործման վերաբերյալ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման համակարգը ՀՀ-ում կառավարվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով (2014թ.): Սույն օրենքը կարգավորում է ՀՀ-ում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

Շրջակա միջավայրի պահպանությունն ու բնական ռեսուրսների օգտագործումը կարգավորող գործող օրենսդրական դաշտը ներառում է նաև բազմաթիվ իրավական ակտեր: ՀՀ Կառավարության որոշումները բնապահպանական օրենքների գործողության հիմնական իրավական լծակներն են: Ոլորտը կարգավորվում է նաև ՀՀ նախագահի, վարչապետի և նախարարների որոշումներով և հրամաններով:

Աղյուսակ 2.1-ում հակիրճ ներկայացվում են այն օրենքների հիմնադրույթները, որոնք առնչվում են ոռոգման համակարգերի վերականգնման ծրագրի հետ:

Սույն հաշվետվությունը մշակվել է ՀՀ համապատասխան օրենսդրության ու նորմատիվային ակտերի (աղյուսակ 2.1), ինչպես նաև միջազգային համաձայնագրերով ստանձնած ՀՀ պարտավորությունների (աղյուսակ 2.2)

համաձայն: Հաշվետվության մեջ հաշվի են առնվել նաև շինարարական ոլորտը կարգավորող մի շարք օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, որոնք սահմանում են շինարարական նորմերն ու չափանիշները (СНП-եր), ինչպես նաև «Պետության և հասարակության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը (2006թ.):

Սույն հաշվետվության գնահատման աշխատանքներն իրականացվել են հիմնվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) համապատասխան դրույթների վրա: Վերջինիս համաձայն նախատեսվող գործունեությունը դասակարգվել է որպես «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ՝ փորձաքննության նախնական փուլին ներկայացվող շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի պահանջներին համապատասխան, ըստ որի փորձաքննությունն իրականացվում է մեկ /նախնական/փուլով:

Շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ այլ օրենքների դրույթներ ևս հաշվի են առնվել սույն հաշվետվության գնահատման ժամանակ: Դրանք առնչվում են բնապահպանական հատուկ պահպանվող տարածքներին, մթնոլորտային օդի պահպանությանը, մշակութային և պատմության հուշարձաններին, բուսական և կենդանական աշխարհին, ջրային ռեսուրսների պահպանությանը, թափոնների կառավարմանը, աշխատողների աշխատանքային անվտանգության և սանիտարահիգիենիկ պայմանների ապահովմանը:

Նախատեսվող աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող հնարավոր ազդեցությունները կկանխարգելվեն և/կամ կնվազեցվեն շրջակա միջավայրի ազդեցությունը մեղմացնող միջոցառումների ժամանակին և ճիշտ իրականացման արդյունքում, որոնք հետագայում մանրամասն ներկայացված են ՇՄԿՊ-ում:

Նախնական գնահատման հաշվետվությունը ներառում է ծրագրի իրականացման տարբեր փուլերում (շինարարություն, շահագործում) հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի, ինչպես նաև բնակչության տարբեր խավերի վրա:

*Աղյուսակ 2.1. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության ոլորտի օրենսդրություն*

No.	Անվանում	Կարգավորման ոլորտը
1.	«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (2014)	«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը բաղկացած է ՀՀ-ում տարբեր բնույթի ծրագրերի և գործունեությունների համար ՇՄԱԳ-ի գործընթացի հիմնական քայլերից: Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Օրենքի 14-րդ հոդվածով սահմանվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության և շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների, որոնք դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Որևէ տարածքի «հատուկ կարգավիճակը» նույնպես շրջակա միջավայրի վրա ազդեցության ուսումնասիրության անհրաժեշտություն է առաջացնում: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:
2.	«Բնության հատուկ պահպանվող արածքների մասին» ՀՀ օրենք (2006)	Սահմանում է հատուկ պահպանվող տարածքները, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ տարածքների որոշման և դրանք ղեկավարելու գործընթացները: Առանձնացվում է ՀՀ Պահպանվող հողատարածքների չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ:
3.	«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998)	Իրավական և քաղաքականության հիմքեր է ստեղծում ՀՀ տարածքում պատմամշակութային անշարժ հուշարձանների, պատմական միջավայրի պահպանության և օգտագործման համար ու կանոնակարգում է պահպանության և օգտագործման իրավահարաբերությունները: Օրենքի 15-րդ հոդվածը ներկայացնում է հուշարձանների բացահայտման և պետական գրանցման ընթացակարգերը, դրանց շուրջ պահպանման գոտիների գնահատման և պատմամշակութային արգելոցների ստեղծման ընթացակարգերը: 22-րդ հոդվածը պահանջում է նախքան հուշարձաններ պարունակող հողատարածքներում շինարարական, գյուղատնտեսական և այլ տիպի գործունեություն իրականացնելը ստանալ լիազորված մարմնի (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության գործակալություն) հավանությունը:
4.	ՀՀ օրենք «Բուսական աշխարհի մասին» (1999), ՀՀ օրենք «Կենդանական աշխարհի մասին»(2000)	Հիմնականպես բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության ապահովումն է, սահմանվում է ՀՀ բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության և կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականություն, սահմանում է նաև տեսակների՝ մասնավորապես էնդեմիկ և վտանգված տեսակների, մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերը:
5.	«Մթնոլորտային	Այս օրենքը կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սահմանարկերի նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:
6.	«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)	սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական,

No.	Անվանում	Կարգավորման ոլորտը
		<p>արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները, ներառյալ էներգետիկայի, ջրային տնտեսության (ջրամատակարարում, ջրահեռացում, պոմպակայաններ, ջրամբարներ և այլն) և այլ նպատակներով հատկացվող հողերի օգտագործման հիմնադրույթները:</p> <p>Օրենսգիրքը սահմանում է հատուկ պահպանվող հողատարածքները, ինչպես նաև անտառածածկ, ջրածածկ և պահուստային հողերը: Այն նաև սահմանում է հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:</p> <p>Ջրային հողեր են համարվում ջրային օբյեկտներով՝ գետերով, բնական և արհեստական ջրամբարներով, լճերով զբաղեցված, ինչպես նաև ջրային օբյեկտների օգտագործման և պահպանության համար անհրաժեշտ հիդրոտեխնիկական, ջրատնտեսային և այլ օբյեկտների համար առանձնացված տարածքները:</p>
7.	«Հողօգտագործման	<p>նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:</p>
8.	«Ընդերքի մասին ՀՀ օրենսգիրք»(2011)	<p>ի թիվս այլ հարցերի, սահմանում է հանքային ռեսուրսների և ստորգետնյա ջրերի օգտագործման և պահպանության հիմնական դրույթները, ներառյալ՝ ստորգետնյա ջրային ռեսուրսների սանիտարական պահպանության գոտիները:</p>
9.	«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002)	<p>հիմնական նպատակն է երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումը: Անդրադառնում է հետևյալ առանցքային խնդիրներին՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակության պարտավորությունների սահմանում, ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի մշակում, պետական ջրային կադաստրի և մոնիթորինգի համակարգի ստեղծում, հանրության համար համապատասխան տեղեկատվության մատչելիության ապահովում, ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի օգտագործման թույլտվություն տրամադրող համակարգերի ստեղծում, անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործում, ջրի որակի չափանիշների սահմանում, հիդրոլոգիական կառուցվածքների շահագործման անվտանգության խնդիրներ, ջրային ռեսուրսների պահպանություն և պետական վերահսկողություն:</p> <p>2002 թ. Ջրային օրենսգրքի ընդունումը մի շարք կանոնակարգերի և ընթացակարգերի ընդունման անհրաժեշտություն առաջացրեց, այդ թվում՝ թույլտվությունների տրամադրման ընթացակարգեր, սանիտարական ելքեր, ցամաքորդային ջրի օգտագործում, ջրային ռեսուրսների այլընտրանքային հաշվառում, անդրսահմանային ջրային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվության մատչելիություն, ձկնաբուծության նպատակներով ջրօգտագործում, ստորգետնյա ջրային ռեսուրսների պահպանություն, պետական ջրային կադաստրում փաստաթղթերի գրանցում, հանրության տեղեկացվածություն և Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից մշակված փաստաթղթերի հրապարակում, ինչպես նաև ջրային ոլորտին և բնապահպանական խնդիրներին առնչվող այլ ուղեցույցներ և նորմատիվ փաստաթղթեր:</p>

No.	Անվանում	Կարգավորման ոլորտը
10.	«Թափոնների մասին» ՀՀ օրենք(2004)	սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական եւ տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները:
11.	ՀՀ օրենք «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրությունների մասին» (2005)	սահմանում է Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի պահպանության, ռազմավարական կառավարման և օգտագործման երկարաժամկետ զարգացման հայեցակարգը: Այն հստակեցնում է երկրի ջրային ոլորտի համապարփակ կառավարման և պլանավորման առանցքային սկզբունքները՝ սահմանելով առաջնահերթ խնդիրներն ու մոտեցումները:
12.	ՀՀ օրենք «Բնապահպանական վերահսկողության մասին» (2005)	կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:
13.	«ՀՀ Անտառային օրենսգիրք»(2005)	Կարգավորում է անտառների պահպանությունը, պաշտպանությունն ու կառավարումը:
	«Մթնոլորտային օդի պահպանման մասին» ՀՀ օրենքը (1994թ. Հոկտեմբերի 11, ՀՕ-121)	«Մթնոլորտային օդի պահպանման մասին» ՀՀ օրենքը (1994թ. Հոկտեմբերի 11, ՀՕ-121) կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների հարցերը: Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման, ինչպես նաև մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման և հաստատման վերաբերյալ հարցերը կարգավորվում են օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերով՝ Կառավարության 22.04.1999 թվականի N259 և 27.12.2012 թվականի N1673-Ն որոշումներով»,
14	Արտակարգ իրավիճակների իրավական ակտեր	Կառավարության 2012թ. փետրվարի 9-ի N 138 որոշման N 2 հավելված, Կառավարության 2012թ. հոկտեմբերի 25-ի N 1351-Ն որոշում



<p>15. ՀՀ օրենք «Ջրի ազգային ծրագրի մասին» (2006)</p>	<p>հիմնական նպատակն է սահմանել Ջրային օրենսգրքով, Ջրի ազգային քաղաքականությամբ և Ծրագրով սահմանված հիմնական նպատակներին և խնդիրներին հասնելու համար նախատեսված կարճաժամկետ (մինչև 2010), միջնաժամկետ (2010-2015) և երկարաժամկետ (2015-2021) միջոցառումները: Օրենքը նախատեսում է հետևյալ առանցքային միջոցառումների իրականացումը.</p> <ul style="list-style-type: none"> <li>- միջոցառումների մշակում, որոնց նպատակն է ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների սահմանումը և ազգային ջրային պաշարի ավելացումն ու պահպանությունը, ջրային համակարգերի դասակարգումը, պետական նշանակության ջրային համակարգերի չափանիշների սահմանումը,</li> <li>- ջրի պահանջարկի և առաջարկի գնահատում,</li> <li>- ջրային ռեսուրսների կուտակման/պահուստավորման, բաշխման և օգտագործման ռազմավարության մշակում,</li> <li>- միջոցառումների սահմանում` ուղղված ջրային նորմերի մշակմանը, էկոլոգիական/ավազագույն հոսքի ծավալի և սպառման համար օգտագործվող ջրի առավելագույն թույլատրելի սահմանների որոշմանը, հատուկ պահպանվող ավազանային տարածքների և արտակարգ էկոլոգիական իրավիճակների և աղետների գոտիների սահմանմանը, ջրային էկոհամակարգերի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը, ջրային ռեսուրսների մոնիթորինգի բարելավմանը և ադոտոման կանխարգելմանը,</li> <li>- Ջրի ազգային ծրագրի իրականացման համար ֆինանսական պահանջների և առաջարկվող ֆինանսավորման աղբյուրների սահմանում,</li> <li>- հանրության տեղեկացվածության ապահովում և այլն:</li> </ul> <p>“ՀՀ Ջրի ազգային ծրագրի մասին” ՀՀ օրենքը “դինամիկ” փաստաթուղթ է, որը պետք է պարբերաբար թարմացվի:</p>
---	--

## 2.2. Միջազգային համաձայնագրեր

Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և վավերացրել է նաև շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող մի շարք միջազգային կոնվենցիաներ և արձանագրություններ, որոնք ներկայացված են աղյուսակ 2.2-ում: Ընդգծվածներն ամենաշատն են առնչվում սույն նախագծի բնապահպանական նախնական գնության և ազդեցության գնահատման հետ:

Աղյուսակ 2.2. ՀՀ կողմից ստորագրված և/կամ վավերացված բնապահպանական կոնվենցիաներ և արձանագրություններ

	Կոնվենցիայի կամ արձանագրության անվանումը և վայրը	Ստորագրվել է	Վավերացվել է
1.	«Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար, 1971թ.)	1993	վավերացված էԽՍՀՄ կողմից
2.	Կենսաբազմազանության մասին կոնվենցիա (Ռիո-դե-Շանեյրո, 1992)	1992	31/03/1993
3.	Կենսաբանական անվտանգության մասին Կարթագենյան արձանագրություն (Կարթագենա, 2000)	2000	15/03/2004
4.	Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիան (Ելու Յորք, 1992)	1992	29/03/1993
5.	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997)		27/12/2002
6.	Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին կոնվենցիա (ժնև, 1979)		14/05/1996
7.	«Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո, 1991)		14/05/1996
	«Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև, 2003)	21/05/2003	
8.	Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցությունների մասին կոնվենցիա (Շելսինկի, 1992)		14/05/1996
	Անդրսահմանային ջրերի վրա արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործության արդյունքում պատճառած վնասի համար քաղաքացիական պատասխանատվության և փոխհատուցման մասին արձանագրություն (Կիև, 2003)	21/05/2003	
9.	Անապատացման դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (Փարիզ, 1994)	1994	1997
10.	«Վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա (Բազել, 1989)		26/03/1999
11.	Օզոնային շերտի պահպանության մասին կոնվենցիա (Վիեննա, 1985)		28/04/1999
	Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրություն (Մոնրեալ, 1987)		28/04/1999
12.	ՄԱԿ ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուս, 1998թ.)	1998	14/05/2001
13.	ՄԱԿ-ի «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին» կոնվենցիա (Ռոտերդամ, 1998թ.)	1998	22/10/2003

14.	«Միջազգային լճերի և անդրսահմանային ջրահոսքերի պահպանության և օգտագործման մասին» կոնվենցիա (Յեյաիսկի, 1992)	1999	
	«Ջրի և առողջության մասին» արձանագրություն (1999)	17/06/1999	
15.	«Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ, 2001)	23/05/2001	22/10/2003
16.	“Կայուն օրգանական աղտոտիչների մասին” արձանագրություն	14/12/1998	
17.	«Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ կարգի թշնամական օգտագործումը արգելելու մասին» կոնվենցիա (ժնև, 1976թ.)		04/12/2001
18.	Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենս, 2000)	14/05/2003	23/03/2004
19.	«Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ, 1972թ.)		22/06/1993
20.	Վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Եվրոպայի կոնվենցիա (Բեռն, 1979)	13/03/2006	
21.	Հնագիտական ժառանգության պահպանության մասին Եվրոպական կոնվենցիա	18/06/2005	
22.	Ոչ նյութական մշակութային ժառանգություն մասին կոնվենցիա		20/03/2006
23.	Ոչնչացման վտանգի տակ գտնվող վայրի կենդանական և բուսական աշխարհի տեսակների տարածման վայրերում միջազգային առևտրի մասին կոնվենցիա	1973	27/11/2010
24.	Ծանր մետաղների վերաբերյալ արձանագրություն	14/12/1998	
25.	Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրների մասին արձանագրություն (Կիև 2003)	21/05/2003	


### 3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

#### 3.1. Տեղադիրքը

Ուսումնասիրվող ջրանցքը գտնվում է Գեղարքունիք մարզի Ծովինար գյուղի համայնքային հողերի տարածքում Ծովինար գյուղը գտնվում է բարձր լեռնային գոտում, որի միջին բացարձակ բարձրությունները հասնում են՝ 2100-2280մ:

«Մեծ առու» ջրանցքը սկիզբ է առնում «Մեծ առու» կոչվող հատվածից և հյուսիս-արևմտյան ուղղությամբ՝ անցնելով ռելիեֆի բազմաթիվ աջ ու ձախ թեքումներով, հասնում է ուղեգծի վերջը:

Գոյություն ունեցող ջրանցքը հողային հունով ջրանցք է, որի ուղեգծի անմիջապես կողքով կառուցվելու է ստորգետնյա տեղադրմամբ նախատեսվող ջրագիծը, որից հետո առկա ջրանցքը դուրս կբերվի շահագործումից:



Ծովինար համայնքում ամրացված գեոդեզիական կետերի կոորդինատների /X,Y/ և բարձրությունների /H/ ցուցակ

Ռեպերի համարը	X	Y	H	Կետի համարը
1	4443263.9	8542448.615	2164.665	28
2	4443053.846	8542343.953	2163.842	175
3	4443619.01	8541713.755	2157.627	899
4	4443894.775	8540907.949	2155.253	1645
5	4443529.017	8541383.772	2158.659	1778
6	4441134.158	8542370.1	2282.546	1847
7	4441926.003	8542573.958	2243.748	2077
8	4444181.129	8540426.666	2137.903	2274
9	4444413.011	8540047.203	2124.238	2447
10	4444574.359	8540190.194	2113.375	2619

### 3.2. Կլիմայական պայմանները

Ձմեռն այնտեղ ցուրտ է և ձնառատ, ամռանը զով: Համաձայն Գեղարքունիքի մարզի Գավառի օդերևութաբանական կայանի դիտարկումների տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 4.6°C է, օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -33°C է, օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը -34°C է, հողի սառեցման հաշվարկային խորությունը հասնում է 1.48 մ: Միջին տարեկան տեղումների քանակը կազմում է 488 մմ, ձյան շերտի միջին բարձրությունը՝ 70 սմ և ավելի:


Գարունը իր իրավունքների մեջ է մտնում ապրիլի վերջին կամ մայիսի սկզբին, իսկ երբեմն ավելի ուշ, պայմանավորված նրանով, որ սառցակալումները վերանում են մայիսի կեսերին:

Ստորև ներկայացված են Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի իրադրային սխեման և բնակլիմայական ցուցանիշները ըստ մոտակա՝ Մարտունիի



օդերևութաբանական կայանի տվյալների:

„Մեծ առու” ջրանցքի տեղանքի իրադրային սխեմա



Աղյուսակ 3.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Օդերև- ութաբ. կայանը	Բարձրությունը ծովի մակար- դակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարե- կան	Բացարձ. Նվազա- գույն	Բացարձ. առավելա- գույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Մարտունի	1943	-5.7	-5.8	-1.7	4.8	9.0	12.9	16.0	15.8	12.8	7.5	2.4	-2.9	5.4	- 32	34

Աղյուսակ 3.2 Օդի հարաբերական խոնավությունը

Օդերև- ութաբ. կայանը	Բարձրությունը ծովի մակար- դակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարե- կան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Մարտունի	1943	68	71	69	66	68	70	72	72	65	65	66	68	68	64	51

Աղյուսակ 3.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը Արարկիի օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Ձնածածկույթը, մմ	
	Ըստ ամիսների													Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը, մմ	Տարվա ձնածածկույթի օրերը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Մարտունի	23	28	41	54	71	69	42	29	33	39	39	24	492	75	103
	51	34	40	46	41	69	65	37	59	49	84	41	84		

### 3.3. Օդային ավազան

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Օդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

2020 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ընդհանուր առմամբ 2020 թվականին կատարվել է մթնոլորտային օդի 33216 նմուշառում, իրականացվել 36012 դիտարկում:

ՊՈԱԿ-ը Ծովինար բնակավայրում չունի դիտակայան, չի տեղադրում պասիվ նմուշառիչներ, մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ ՊՈԱԿ-ի առաջարկած է համապատասխան ձեռնարկ-նուղեցույցի<sup>1</sup>: Ըստ այդ նուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.2 մգ/մ<sup>3</sup>;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ<sup>3</sup>;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ<sup>3</sup>;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ<sup>3</sup>:

### 3.4. Ջրային ռեսուրսներ

Տարածաշրջանի հիմնական ջրային ռեսուրսը Սևանա լիճն է:

Սևանա լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900 մետր բարձրության վրա: Այն աշխարհի քաղցրահամ ջուր ունեցող 2-րդ բարձրադիր լիճն է: Հնում հայտնի է եղել Գեղամա ծով, Գեղարքունյաց ծով անուններով:

Երկարությունը 70 կմ է, առավելագույն լայնությունը՝ 55 կմ: Հայելու մակերեսը կազմում է 1260 կմ<sup>2</sup>, որով ամենախոշորն է Հարավային Կովկասի տարածքում: Միջին խորությունը 26.8 մ է, ամենախորը վայրը՝ 83 մ (Փոքր Սևան): Ջրի ծավալը 32,92 մլրդ մ<sup>3</sup> է: Սևանա լիճը Շորժայի ստորջրյա թմբով բաժանվում է 2 մասի՝ Մեծ Սևանի (37.7 մ միջին խորություն) և Փոքր Սևանի (50.9մ):

Սևանա լիճը բաց լիճ է և ունի քաղցրահամ ջուր: Լիճ են թափվում 28 մեծ ու փոքր գետակներ, սակայն սկիզբ է առնում միայն մեկը՝ Հրազդանը: Վերջինիս շնորհիվ ջրերի տարեկան արտահոսքը կազմում է 0.05ից մինչև 1.5 կմ<sup>3</sup>: “Սևանա լճի մասին” օրենքը ընդունելուց հետո (2001 թ.) լճից տարեկան արտահոսքը չի գերազանցել 0.34 կմ<sup>3</sup>:

Լճի ծագումնաբանական վարկածներից մեկի համաձայն՝ այն առաջացել է չորրորդական ժամանակաշրջանում: Այն գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով՝ միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձնհալոցքային

1 ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ. “ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդի աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները” նուղեցույց-ձեռնարկ: Երևան-2011

ջրեր լցվելու արդյունքում: Չորս կողմում առանձնակի շրջապատում են Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռները:

ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգը իրականացնում է ՀՀ շրջակա միջձավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը: 2019 թվականի հուլիսին Սևանա լճի ջրի որակի ուսումնասիրության նպատակով ջրի նմուշառումն իրականացվել է 14 դիտակետում, ջրի նմուշները վերցվել են ափամերձ և ափից կենտրոն գոտիներից: Ափամերձ գոտուց ջրի նմուշները վերցվել են և՛ մակերևութային (մինչև 0.5 մ խորության) և՛ հատակամերձ շերտերից: Սևանա լճից վերցված փորձանմուշներում, ձկնատնտեսական նորմերի գնահատման համաձայն, ՍԹԿն գերազանցել են ԹՔՊ-ի, ամոնիում իոնի, պղնձի, քրոմի, մանգանի, վանադիումի և սելենի կոնցենտրացիաները: ԹՔՊ-ի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան գերազանցվել է՝ 1.2-1.4 անգամ, ամոնիում իոնին՝ 1.3 անգամ, պղնձին՝ 1.7-3.7 անգամ, քրոմին՝ 4.4-6.6 անգամ, վանադիումին՝ 4.4-5.3 անգամ, սելենին՝ 2.8-3.3 անգամ: Որոշված մյուս ցուցանիշների պարունակությունները դիտվել են ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների տիրույթներում: Սևանա լճում կապտականաչ ջրիմուռների աճի հնարավոր պատճառ հանդիսանում են լճի ջրի վաղ տաքացումը և լճում բավարար քանակությամբ կենսածին տարրերի՝ հատկապես ֆոսֆորի առկայությունը: Վերջին տարիներին դիտվում է Սևանա լճում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիայի աճ: Սևանա լճի աղտոտման հավանական պատճառ են հանդիսանում նաև կոմունալկենցաղային կեղտաջրերի՝ առանց պատշաճ մակարդակով մաքրվելու արտահոսքերը Սևանի ՋԿՏ-ի գետեր կամ անմիջապես Սևանա լիճ: Ամբողջապես չմաքրված կոմունալկենցաղային կեղտաջրերը իրենց հետ գետեր, իսկ այնուհետև լիճ են տանում ազոտի և ֆոսֆորի զգալի քանակություն:

### 3.5. Հողածածկ

Գործունեության ենթակա տարածքին առավել բնորոշ են լեռնամարգագետնային հողերը: Այստեղ ցածր ջերմաստիճանը և ուժեղ խոնավացումը նպաստել են գաճաճ, ուժեղ ճիւղ առաջացնող հացազգի տարախոտային և ընդավոր բուսական խմբավորումների զարգացմանը: Լեռնամարգագետնային հողերի մեծ մասի բուսածածկը հիմնականում օգտագործվում է անասնապահության համար՝ որպես արոտավայրեր: Լեռնամարգագետնային հողերի հումուսի պարունակությունը 13-20% է, ունեն թեթև մեխանիկական կազմ ու փխրուն կառուցվածք, միջինից ցածր կատիոնային փոխանակության ունակություն (15-20 մգ/էկվ) և թթվային ռեակցիա (pH=4,8-5,5), բարենպաստ ջրաֆիզիկական հատկություններ:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքն ընկած է Գեղամա լեռների հյուսիսարևելյան միջին բարձրության լանջերին, բավական բարդ ռելիեֆային պայմաններում, որը արտահայտված է հրաբխային խառնարաններով, բլրաթմբերով, գոգավորություններով, մշտահոս և ժամանակավոր հոսքերի ձորակներով:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են միոպլիոցենի և ստորին չորրորդական ժամանակի անդեզիտադաշիտները, բազալտները, որոնք մերկանում են գյուղի շրջակայքի բարձրություններում, բուն տեղամասերում մերկանում են մեծ մակերեսներով, ցցված ժայռային ձևերով, իսկ մնացած մասերը՝ ծածկված են էյուվիալ-դեյուվիալ առաջացումներով:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը գրունտային ջրերով բավական աղքատ է: Նրանք թաղված են բավական խորը և բուն գործունեության տարածքում գտնվում



են 20 մ-ից խորը հորիզոններում: Գրունտների ճեղքավորվածության և բեկորային կառուցվածքի պատճառով գրունտային ջրերը այստեղ հորիզոն չեն կազմում և հիմնականում կարող են հանդիպել տարբեր խորությունների վրա

Էկզոգեն երկրաբանական երևույթներից այստեղ առկա են մակերեսային էրոզիա և ջրոդողում՝ մթնոլորտային տեղումներից:

ՀՀ սեյսմիկ գոտևորման սխեմատիկ քարտեզի համաձայն Ծովինար գյուղը գտնվում է սեյսմիկ I գոտևում, որն ունի 0.3g արագացում և 8 բալ երկրաշարժերի հնարավոր ուժգնություն:

Գեոարքունիքի մարզի Ծովինար համայնքի Մեծ առու ջրանցքի վերակառուցման նպատակով՝ ջրանցքի կառուցվող հատվածի նախագծման ժամանակ կատարել շինհրապարակի սեյսմիկ պարամետրերի գնահատում՝ գրունտների դինամիկ բնութագրերի, հաշվարկային արագացումների որոշում՝ 2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթների համաձայն, ինչպես նաև մայր և 2-րդ կարգի ջրանցքների վերանորոգման/վերականգնման ժամանակ իրականացնել տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության գնահատում՝ Կառավարության 2012թ. փետրվարի 9-ի N 138 որոշման N 2 հավելվածի 3.3.1 կետով, Կառավարության 2012թ. հոկտեմբերի 25-ի N 1351-Ն որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված դրույթների համաձայն:

Ըստ ՀՀ օդերևութաբանական կայանների դիտարկումների (գյուղի բացարձակ նիշերից բարձր է տարածքը մոտ 300-400 մ) գրունտների սառեցման առավելագույն խորությունը կազմում է 1.48 մ:

Համաձայն ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների արդյունքների նախատեսվող գործունեության տարածքը բարենպաստ է շինարարական աշխատանքների համար, որոշ դժվարություն կարող են առաջացնել գրունտային ճանապարհների ոչ հարմարավետությունը:

**Երկրաբանալիթոլոգիական կառուցվածքում** մասնակցում են հետևյալ

երկրաբանալիթոլոգիական շերտերը, ըստ մեր ուսումնասիրությունների արդյունքի (վերևից-ներքև)՝

**ա)Շերտ-1** Բուսահող մուգ մոխրագույն, մանրախճի պարունակությամբ մինչև 10%-ի չափով, ավազակավային կազմի: Տարածված է ուղեգծի որոշ մասերում՝ 0.1 - 0.2 մետր հզորությամբ: Ժ1§9<sup>վ</sup>-II

**բ)Շերտ-2** Ավազակավային գրունտ բաց շագանակագույն, մանրախճի պարունակությամբ մինչև 15%-ի չափով, խոնավ է, կիսապինդ թանձրության: Բեկորային նյութը վատ և թույլ հղկվածության է, ներկայացված տարբեր ապարներով: Ունի սահմանափակ տարածում՝ 0.8 մետր և ավելի հզորությամբ: Ժամանակակից էյուվիալ-դեյուվիալ առաջացումներ: Ժ1§33<sup>գ</sup>-III

**գ)Շերտ-3** Մանրախճային գրունտ կավավազային լցնով մինչև 30%-ի չափով, թույլ խոնավ, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով: Ունի լայն տարածում: Մերկացված հզորությունը մինչև 0.2 – 1.0 մետրի սահմաններում: Ժամանակակից էյուվիալ-դեյուվիալ առաջացումներ: Ժ1§13-IV

**դ)Շերտ-4**

Բեկորախճային գրունտ կավավազային լցնով մինչև 20%-ի չափով, տեղ-տեղ մեծաբեկորային անջատումներով: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված հիմնականում անդեզիտադացիտային, անդեզիտաբազալտային ապարներով: Գրունտը միջին խտության է: Ունի լայն տարածում, մերկացված հզորությունը մինչև 2.3 մետր և ավելի: Չորրորդական ժամանակի դելյուվիալ-կոյուվիալ առաջացումներ: Ժ1§17<sup>ա</sup>/Ժ1§17<sup>բ</sup> - V / VI (75/25% հարաբերակցությամբ)

Ստորև աղյուսակում բերվում են շերտերի ֆիզիկամեխանիկական պարամետրերի միջինացված ցուցանիշները, համաձայն ֆոնդային նյութերի ուսումնասիրությունների և ըստ ՀՀՇՆ նորմերի՝

Շերտի անունը	Շերտի համարը	Երկրաբանական ինդեքսը	Գրունտի խտությունը, $\rho = m/v^3$	Ներքին շփման անկյունը ( $^{\circ}$ )		Տեսակարար կցորդումը, ԿՊա		Դեֆորմացիայի մոդուլը, $E = \text{ՄՊա}$	Հաշվարկային դիմադրողականությունը, $R_0 = \text{ԿՊա}$	Գրունտի սեյսմիկ հատկության կատեգորիան
				$\phi^b$	$\phi^h$	$C^b$	$C^h$			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
Բուսահող	1	-	1.76	-	-	-	-	-	-	III
Ավազակավային գրունտ	2	e-dQ <sub>4</sub>	1.85	20	17	24	16	19	190	III
Մանրախճային գրունտ	3	e-dQ <sub>4</sub>	2.1	34	31	-	-	35	350	II
Բեկորախճային գրունտ	4	d-k Q	2.3	36	33	-	-	45	450	II

**Ուղեգծերի ինժեներաերկրաբանական համառոտ նկարագիրը**

Շովինար գյուղի ոռոգման համակարգի արդիականացման ծրագրի շրջանակում, անհրաժեշտ է կատարել «Մեծ առու» ջրանցքի առկա և վերականգնման նախագծային աշխատանքներ, Մ-1 մագիստրալի և Ճ-1 ճյուղի ուղեգծով հանդերձ:

Ստորև բերվում են ուղեգծերի երկրաբանալիթոլոգիական նկարագրերը առանձին-առանձին՝

1. «Մեծ առու» ջրանցքը՝ 4.6 կմ երկարությամբ, սկիզբ է առնում «Մեծ առու» կառուցված հատվածից և անցնելով հյուսիսարևմտյան ուղղությամբ, կրկնելով ռելիեֆի բազմաթիվ թեքումները՝ մեկ աջ մեկ ձախ, հասնում է ՆԿ 46+05 կետը՝ ուղեգծի վերջը:

Ստորև բերվում է ուղեգծի երկրաբանալիթոլոգիական կտրվածքը ըստ նշակետի և շինարարական մշակման կարգը, համաձայն ՀՀՇՆ նորմերի:

**ՆԿ 0+00 - 2+00**

- Շերտ-1** 0.0-0.1 Բուսահող մոխրագույն, շագանակավուն երանգով, մանրախճի պարունակությամբ մինչև 10%-ի չափով: Ժ1Ց9<sup>վ</sup>-II
- Շերտ-3** 0.1-0.8 Մանրախճային գրունտ կավավազային լցնով մինչև 25-30%-ի չափով: Ժ1Ց13-IV
- Շերտ-4** 0.8-2.0 Բեկորախճային գրունտ կավավազային լցնով մինչև 25%-ի չափով: Ժ1Ց17<sup>ա</sup>/Ժ1Ց17<sup>բ</sup> - V / VI (75/25% հարաբերակցությամբ)

**ՆԿ 2+00 - 9+00**

- Շերտ-1** 0.0-0.1 Բուսահող մոխրագույն, շագանակավուն երանգով, մանրախճի պարունակությամբ մինչև 10%-ի չափով: Ժ1Ց9<sup>վ</sup>-II
- Շերտ-2** 0.1-0.4 Ավազակավային գրունտ բաց շագանակագույն, մանրախճի պարունակությամբ մինչև 10%-ի չափով: Ժ1Ց33<sup>գ</sup>-III
- Շերտ-3** 0.4-1.0 Մանրախճային գրունտ կավավազային լցնով մինչև 25-30%-ի չափով: Ժ1Ց13-IV
- Շերտ-4** 1.0-2.2 Բեկորախճային գրունտ կավավազային լցնով մինչև 25%-ի չափով: Ժ1Ց17<sup>ա</sup>/Ժ1Ց17<sup>բ</sup> - V / VI (75/25% հարաբերակցությամբ)

**ՆԿ 9+00 - 12+00, ՆԿ 44+00 - 46+00 (ուղեգծի վերջը)**

- Շերտ-2** 0.0-0.5 Ավազակավային գրունտ բաց շագանակագույն, մանրախճի պարունակությամբ մինչև 10%-ի չափով: Ժ1Ց33<sup>գ</sup>-III
- Շերտ-3** 0.5-1.1 Մանրախճային գրունտ կավավազային լցնով մինչև 25-30%-ի չափով: Ժ1Ց13-IV
- Շերտ-4** 1.1-1.9 Բեկորախճային գրունտ կավավազային լցնով մինչև 25%-ի չափով: Ժ1Ց17<sup>ա</sup>/Ժ1Ց17<sup>բ</sup> - V / VI (75/25% հարաբերակցությամբ)

**ՆԿ 12+00 - 24+50, ՆԿ 30+00 - 44+00**

- Շերտ-3** 0.0-0.6 Մանրախճային գրունտ կավավազային լցնով մինչև 25-30%-ի չափով: Ժ1Ց13-IV
- Շերտ-4** 0.6-2.2 Բեկորախճային գրունտ կավավազային լցնով մինչև 25%-ի չափով: Ժ1Ց17<sup>ա</sup>/Ժ1Ց17<sup>բ</sup> - V / VI (75/25% հարաբերակցությամբ)

**ՆԿ 24+50 - 30+00**

- Շերտ-4** 0.0-2.2 Բեկորախճային գրունտ կավավազային լցնով մինչև 25%-ի չափով: Ժ1Ց17<sup>ա</sup>/Ժ1Ց17<sup>բ</sup> - V / VI (75/25% հարաբերակցությամբ)

**2. Ճյուղ-1-ը (Ճ-1)՝ 0.257 կմ երկարությամբ, սկիզբ է առնում նոր նախագծվող ջրանցքի**

ՆԿ 21+10 կետից և անցնելով հյուսիսարևելյան ուղղությամբ, հասնում է ՆԿ 2+57

կետը՝ ուղեգծի վերջը:

Ստորև բերվում է ուղեգծի երկրաբանալիթոլոգիական կտրվածքը ըստ նշակետի և շինարարական մշակման կարգը, համաձայն ՀՀՇՆ նորմերի:

**ՆԿ 0+00 - 2+57 (ուղեգծի վերջը)**

<b>Շերտ-3</b>	0.0-0.8	Մանրախճային գրունտ կավավազային լցնով մինչև 25-30%-ի չափով: Ժ1Ց13-IV
<b>Շերտ-4</b>	0.8-2.0	Բեկորախճային գրունտ կավավազային լցնով մինչև 25%-ի չափով: Ժ1Ց17 <sup>ա</sup> /Ժ1Ց17 <sup>բ</sup> - V / VI (75/25% հարաբերակցությամբ)

**Փորվածքների նկարագիրը**

**«Մեծ առու» ջրանցք**

**Մկ-1 (ՆԿ 0+00)**

- 0.0 – 0.1 Բուսահող մուգ մոխրագույն, շագանակավուն երանգով, մանրախճի պարունակությամբ մինչև 10%-ի չափով, ավազակավային կազմի:
- 0.1 – 0.8 Մանրախճային գրունտ կավավազային լցնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.8 – 2.0 Բեկորախճային գրունտ կավավազային լցնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

**Մկ-2 (ՆԿ 2+50)**

- 0.0 – 0.1 Բուսահող մուգ մոխրագույն, շագանակավուն երանգով, մանրախճի պարունակությամբ մինչև 10%-ի չափով, ավազակավային կազմի:
- 0.1 – 0.4 Ավազակավային գրունտ մանրախճի պարունակությամբ մինչև 10%-ի չափով, խոնավ է, կիսապինդ թանձրության: Բեկորային նյութը ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.4 – 1.0 Մանրախճային գրունտ կավավազային լցնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 1.0 – 2.2 Բեկորախճային գրունտ կավավազային լցնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

**Մկ-3 (ՆԿ 4+50)**

- 0.0 – 0.1 Բուսահող մուգ մոխրագույն, շագանակավուն երանգով, մանրախճի պարունակությամբ մինչև 10%-ի չափով, ավազակավային կազմի:
- 0.1 – 0.5 Ավազակավային գրունտ մանրախճի պարունակությամբ մինչև 10%-ի չափով, խոնավ է, կիսապինդ թանձրության: Բեկորային նյութը ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.5 – 1.0 Մանրախճային գրունտ կավավազային լցնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 1.0 – 1.8 Բեկորախճային գրունտ կավավազային լցնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

#### **Մկ-4 (ՆԿ 7+50)**

- 0.0 – 0.1 Բուսահող մուգ մոխրագույն, շագանակավուն երանգով, մանրախճի պարունակությամբ մինչև 10%-ի չափով, ավազակավային կազմի:
- 0.1 – 0.7 Ավազակավային գրունտ մանրախճի պարունակությամբ մինչև 10%-ի չափով, խոնավ է, կիսապինդ թանձրության: Բեկորային նյութը ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.7 – 1.4 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 1.4 – 2.0 Բեկորախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

#### **Մկ-5 (ՆԿ 10+00)**

- 0.0 – 0.5 Ավազակավային գրունտ մանրախճի պարունակությամբ մինչև 10%-ի չափով, խոնավ է, կիսապինդ թանձրության: Բեկորային նյութը ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.5 – 1.1 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 1.1 – 1.9 Բեկորախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

#### **Մկ-6 (ՆԿ 12+50)**

- 0.0 – 0.7 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.7 – 2.0 Բեկորախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

#### **Մկ-7 (ՆԿ 14+60)**

- 0.0 – 0.5 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.5 – 2.0 Բեկորախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

#### **Մկ-8 (ՆԿ 17+10)**

- 0.0 – 0.4 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.4 – 2.1 Բեկորախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

### **Մկ-9 (ՆԿ 19+10)**

- 0.0 – 0.7 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.7 – 2.0 Բեկորախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

### **Մկ-10 (ՆԿ 21+10)**

- 0.0 – 0.6 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.6 – 1.8 Բեկորախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

### **Մկ-11 (ՆԿ 24+10)**

- 0.0 – 0.5 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.5 – 2.2 Բեկորախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

### **Մկ-12 (ՆԿ 25+10)**

- 0.0 – 1.6 Բեկորախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

### **Մկ-13 (ՆԿ 27+60)**

- 0.0 – 1.8 Բեկորախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

### **Մկ-14 (ՆԿ 28+90)**

- 0.0 – 2.2 Բեկորախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

### **Մկ-15 (ՆԿ 30+70)**

- 0.0 – 0.4 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.4 – 1.8 Բեկորախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

#### **Մկ-16 (ՆԿ 33+20)**

- 0.0 – 0.5 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.5 – 2.0 Բեկորախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

#### **Մկ-17 (ՆԿ 35+70)**

- 0.0 – 0.3 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.3 – 2.3 Բեկորախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

#### **Մկ-18 (ՆԿ 38+70)**

- 0.0 – 0.2 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.2 – 1.8 Բեկորախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

#### **Մկ-19 (ՆԿ 40+80)**

- 0.0 – 0.4 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.4 – 2.0 Բեկորախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

#### **Մկ-20 (ՆԿ 42+60)**

- 0.0 – 0.7 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.7 – 1.7 Բեկորախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

#### **Մկ-21 (ՆԿ 45+30)**

- 0.0 – 0.5 Ավազակավային գրունտ մանրախճի պարունակությամբ մինչև 10%-ի չափով, խոնավ է, կիսապինդ թանձրության: Բեկորային նյութը ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.5 – 1.0 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

- 1.0 – 2.2 Բեկորախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

### Ճյուղ Ճ-1

#### Մկ-22 (ՆԿ 2+00)

- 0.0 – 0.8 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.8 – 2.0 Բեկորախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

### 3.6. Կենսաբազմազանություն

Գեոարքունիքի մարզի բուսական աշխարհը բավականին հարուստ և բազմազան է: Բուսականությունն ունի վառ արտահայտված մոզայիկ բնույթ: Այստեղ գրանցված են մոտ 1600 տեսակից ավելի բարձրակարգ բույսեր (չայաստանում գրանցված բարձրակարգ բույսերի կեսից ավելին), այդ թվում՝ շուրջ 60 հազվագյուտ ու անհետացող, 20 էնդեմիկ՝ որոնք աճում են միայն Սևանի ավազանում-ԼՐԶՈՒՆ ՄԵՎԱՆԻ (ISATIS SEVANGENSIS N.), ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎԱՌՎՌՈՒԿ (ALISSUM HAJASTANUM V.), ՈԶՆԱԹՈՒՓ ԳԱԲԲԵԼՅԱՆԻ (ACANTHOLIMON GABRIELJANAE Mirz.) և այլն: Կան անոթավոր բույսերի 1587 տեսակ, 32 ծառատեսակ, 102 թփերի տեսակ, 1146 բազմամյա խոտաբույս և 307 միամյա ու երկամյա բուսատեսակներ: Շուրջ 60 բուսատեսակներ համարվում են դեղաբույսեր և 100-ը ուտելի: Կան նաև 267 տեսակի սնկեր, որից 100 տեսակը ուտելի են և 24 տեսակը՝ թունավոր: Ֆլորան ներկայացված է 28 ծառատեսակներով, 42 թփերի տեսակներով, 866 բազմամյա խոտաբույսերով և 209 միամյա ու երկամյա բուսատեսակներով: Տարածքի բուսականությունը պատկանում է Սևանի ֆլորիստիկ շրջանին: Սևանա լճի ավազանում բավականին տարածված են նաև բուսականության էքստրագոնալ տիպերը, փլուզուտային, քարացրոնային և ժայռային բուսականությունը: Դրանք առանձին հատվածներով հանդիպում են բոլոր բարձունքային գոտիներում:

**Կարմիր գրքում գրանցված են՝** Խոզանափուշ Ֆյոդորովի *Cousinia fedorovii* Takht., Լրջուն Սևանի *Isatis sevagensis* N. Busch, Թրաշուշան հայաստանյան *Gladiolus hajastanicus* Gabrielian, Հիրիկ Նրբագեղ - *Iris elegantissima* Sosn, Վիշապազուխ Ավստրիական - *Dracocephalum austriacum* L., Գառնառվույտ Հայկական - *Oxytropis armeniaca* Sosn. ex Mulk.:

Տարածաշրջանի բուսական աշխարհի ձևավորմանը մշտապես նպաստել է Սևանա լիճը: «Սևան» ազգային պարկի տարածքի մեծ մասը կազմում են Սևանա լճից ազատված հողագրունտները: Դրանք ավազային են, թեթև, հումուսի աննշան պարունակությամբ: Հիմնականում ձևավորվել են հողագրունտի 3 խմբեր, որոնք ունեն հողագոյացման տարբեր ուղղություններ՝ խոնավ մարգագետնային ավազային, թերի զարգացած ավազակոպճային և սապրոբեյիտային տափաստանացված: Զգալի տարածք են զբաղեցնում թերի զարգացած ավազակոպճային հողագրունտները:

Գործունեության ենթակա տարածքից ուղիղ գծով 700 մ հեռավորության վրա անցնում է Սևան ազգային պարկի սահմանը: «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու



տարածքում հանդիպում է Հայաստանի համար 23 էնդեմիկ բուսատեսակ, 267 տեսակի, ենթատեսակի և ձևերի մակրոմիցետներ (պարկի տարածքում՝ 121 տեսակ, պահպանական գոտում՝ 228 տեսակ սնկեր՝ ականջասունկ սովորական կամ կախասունկ (*Pleurotus ostreatus*), յուղասունկ հատիկավոր (*Suillus granulatus*), շեկլիկ (*Lactarius deliciosus*), աղվեսասունկ (*Cantharellus cibarius*), կոճղասունկ մարգագետնային (*Marasmius oreades*), շամպինիոն սովորական (*Agaricus campestris*), շամպինիոն դաշտային (*Agaricus arvensis*), գոմաղբասունկ սպիտակ, փրչոտ (*Coprinus comatus*), շարքասնկերից (*Tricholomataceae*)՝ կոճղասունկ աշնանային (*Armillaria mellea*), լեպիստա մանուշակագույն ոտիկով (*Lepista personata*), շարքասունկ հողամոխրագույն (*Tricholoma terreum*) և այլն:

Սևան ազգային պարկի ֆլորան ներկայացված է 28 ծառատեսակներով, 42 թփերի տեսակներով, 866 բազմամյա խոտաբույսերով և 209 միամյա ու երկամյա բուսատեսակներով: Լճաշենի լճախորշից թերակղզի ընկած հատվածում Սևանա լճից ջրագատված հողագրունները ծածկված են արհեստական տնկարկներով (սոճի /*Pinus kochiana*), բարդի (*Populus*), չիչխան դժնիկանման-*Hippophae rhamnoides*), որոնց զգալի մասը Սևանա լճի մակարդակի բարձրացման դեպքում կմնան ջրի տակ:

**Ջրային բուսականություն.** անմիջապես Սևանա լճում, ըստ ջրի խորության և պարզության, կան երկու արտահայտված գոտի՝ մակրոֆիտների (հիմնականում ծաղկավոր բույսեր) և խարային ջրիմուռների ու ջրային մամուռների: Ծովինար, Նորատուս, Ջուլաքար, Մարտունի, Լիճք գյուղերի մերձափնյա տարածքներում կան ոչ մեծ ճահիճներ, ուր աճում են բոշխ կարճամազ (*Carex hirta*), դուն երկար (*Cyperus longus*), դուն թուխ (*C. fuscus*), ճլախոտ թաբերնեմոնթանի (*Schoenoplectus tabernaemontani*) և շատ այլ տեսակներ:

#### **Կենդանական աշխարհ.**

Մարզի կենդանական աշխարհը նույնպես հարուստ ու բազմազան է: Մարզի տարածքում հաշվառում են 639 տեսակի հողվածոտանիներ, երկարաչանչ խեցգետին, իսկ ողնաշարավոր կենդանիների ֆաունան ներկայացված է շուրջ 300 տեսակներով, այդ թվում՝ 43 տեսակի փափկամարմիններ, կաթնասունների 44 տեսակ (գայլ, աղվես, նապաստակ, կզաքիս, փորսուղ, աքիս, լուսան, ոչ հաճախ նաև արջ և այլն), թռչունների 267 տեսակ, 3 տեսակ երկկենցաղներ, 17 տեսակ սողուններ և 9 տեսակ ձուկ, այդ թվում Սևանի իշխանը - SALMO ISCHCHAN Kessler, որը գրանցված է Կարմիր գրքում, Սևանի կողակը - VARICOHINUS CAPOETA SEVANGI, Սևանի բեղուն - BARBUS LACERTA GOKTSCHAIKUS և այլն: Պատահաբար լիճ է ներթափանցել նաև լճածածանը: Հանդիպում են սողունների 16 տեսակներ, որոնցից 11 տեսակներ պատկանում են մողեսներ (*Lacertilia*), իսկ 5 տեսակ՝ օձեր (*Serpentes*) կարգին:

**Կարմիր գրքում գրանցված** են՝ սողուններից 2 տեսակ՝ Խայտաբղետ մողեսիկը (*E.a.transcaucasica*) և փոքրասիական մողեսը (*Lacerta parva*): Կաթնասունների 6 տեսակ, (Բեզոարյան այծ (*Capra aegagrus Erxleben*) և այլն/, 39 թռչնատեսակներ (Հայկական որոր (*Larus armenicus*), Արբիելյանի, փետրախոտ Գեղարքունիքի, Խոնդատ Սևանի և այ), ձկներից՝ Սևանի իշխանը իր տարատեսակներով, Սևանի բեղուն (*Barbus goctschaicus Kessler*) և Սևանի կողակը (*Varicorhinus capoeta sevangi, Filippi*) հողվածոտանիներից՝ Արիոն կապտաթիթեռը - *Maculinea arion zara Jachontov*, Մթնշաղային կապտաթիթեռ - *Maculinea ausithous*, Անտեսված կապտաթիթեռ - *Agrodiaetus neglectus Dantchenko, 2000*, Նինայի կապտաթիթեռ - *Agrodiaetus ninae Forster, 1956*, Թուրքական կապտաթիթեռ - *Agrodiaetus turcicus Koçak*, գրանցված են միջազգային միության Կարմիր գրքում:

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հաշվարկվում են Փափկամարմինների (*Mollusca*) 43 տեսակներ, որոնք պատկանում են խիտունջների և

լորձնամույրուսկներին, և Հոդվածոտանիների 639 տեսակներ, որոնք պատկանում են միջատներին (անողնաշարավոր) կենդանիների ցանկին:

Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներից 6-ը՝ Հայաստանի էնդեմներ են: Կապտաթիթեռը (*Maculinea nausithous* Bergs), որն հայտնի է պարկի պահպանական գոտուց, գրանցված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում:

Հանդիպում են երկկենցաղների 4 տեսակները, որոնք պատկանում են Ցատկողներ (*Salientia*) կարգին՝ լճագորտ (*Rana ridibunda*), փոքրասիական գորտ (*Rana macrocnemis*), կանաչ դողոշ (*Bufo viridis*), Շելկովնիկովի ծառագորտ (*H.a.shelkovnikovi*):

Սողունների 16 տեսակներ, որոնցից 11 տեսակներ պատկանում են մողեսների (*Lacertilia*) կարգին, իսկ 5 տեսակ՝ օձեր (*Serpentes*) կարգին: Դրանցից Հայաստանի Կարմիր գրքում գրանցված են խայտաբղետ մողեսիկը (*E.a.transcaucasica*) և փոքրասիական մողեսը (*Lacerta parva*):

Կաթնասունների 44 տեսակներ, որոնք պատկանում են հետևյալ կարգերին.

Միջատակերներ (*Insectivora*) - 7 տեսակ.

Կրծողներ (*Rodentia*) - 15 տեսակ.

Նապաստակներ (*Logomorpha*) - 1 տեսակ.

Չղջիկներ (*Chiroptera*) - 7 տեսակ.

Գիշատիչներ (*Carnivora*) - 11 տեսակ.

Սմբակավոր/կճղակավոր կաթնասուններ (*Artiodactyla*) - 3 տեսակ:

Նշված տեսակներից 6-ը գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում (վայրենակերպը, ջրասամույրը, գորշ արջը, խայտակաքիսը, անտառային կատուն, բեզոարյան այծը):

**Սևանա լճի ձկները ներկայացված են.** սաղմոնազգի-*Salmonidae*, սիգազգի *Coregonidae* և ծածանազգի-*Cyprinidae* ընտանիքներով: Սաղմոնազգիներին են պատկանում Սևանի իշխանը (*Sevan Trout-Salmo ischchan* Kessler 1877) իր 4 էկոլոգիական ենթատեսակներով՝ Ամառային բախտակ (*S. ischchan aestivalis*), Ձմեռային բախտակ (*S. ischchan ischchan*), Գեղարքունի (*S. ischchan gegarkuni*), Բոջակ (*S. ischchan danilewskii*):

Սիգազգիների ընտանիքի ներկայացուցիչը 1920-30-ական թվականներին լճում կլիմայավարժեցված սիգն է (*Whitefish - Coregonus lavaretus*):

Ծածանազգի ձկնատեսակներին են պատկանում լճի երկու էնդեմիկները՝ Սևանի կողակը (*Khrami carp-Varicorhinus capoeta sevangi*) և Սևանի բեղլուն (*Sevan barble-Barbus goktschaicus*): 1980-ական թվականների սկզբից լճում սկսել է հանդիպել նաև արծաթափայլ լճածածանը (*Crucian carp-Carassius auratus gibelio*), որը պատահաբար լիճ է ներթափանցել Արարատյան դաշտի ջրային համակարգերից:

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են թռչունների 267 տեսակներ, որոնք պատկանում են հետևյալ կարգաբանական խմբերին՝ սուզակներ (*Podicipediformes*)-7 տեսակ, ձկնկուլ (*Pelecaniformes*)-4 տեսակ, արագիլ, տառեղ, ջրցուլ (*Ciconiiformes*) -11 տեսակ, ֆլամինգո (*Phoenicopteriformes*) - 1 տեսակ, գիշատիչներ (*Falconiformes*) - 30 տեսակ, սագեր, բադեր, կարապներ (*Anseriformes*) - 28 տեսակ, հավազգիներ (*Galliformes*) - 3 տեսակ, կռունկ, փարփար (*Gruiformes*) - 9 տեսակ, որոր, կոցար, քարաղը (*Charadriiformes*) - 49 տեսակ, աղավնազգիներ (*Columbiformes*) - 4 տեսակ, կկուններ (*Cuculiformes*) - 1 տեսակ, բու (*Strigiformes*) - 3 տեսակ, այծկիթ (*Caprimulgiformes*) - 1 տեսակ, մանգաղաթներ, ծիծեռնակներ (*Apodiformes*) - 5 տեսակ, մեղվակեր, հոպոպ:

Ազգային պարկի տարածքում կան 26 տնտեսապես կարևոր նշանակություն ունեցող թռչնատեսակներ: Դրանցից կոնչան բադը, կարմրագլուխ սուզաբադը, քարակաքավը, լորը,

սովորական տատրակը, թխակապույտ աղավին, անտառային աղավին և այլն հետաքրքրություն են ներկայացնում որսի տեսանկյունից:

**Հայաստանի Կարմիր գրքում** ընդգրկված են 39 թռչնատեսակներ: Դրանցից մեկը՝ Հայկական որորը (*Larus armenicus*) էնդեմիկ տեսակ է:

Ծրագրի ազդեցության ենթակա տարածքներում, որտեղ իրականացվելու են շինարարական աշխատանքներ տարածված են լեռնատափաստանային, ենթալպյան բուսատեսակներ: Տարածքները հանդիսանում են ամառային արոտավայրեր ու խոտհարքներ և գերարածեցման հետևանքով բուսական աշխարհը կրել է զգալի վնաս:

Բուսականության ոչ մի տեսակ չի ենթարկվի շինարարական աշխատանքների ազդեցության, քանի որ աշխատանքներն իրականացվում են գոյություն ունեցող ոռոգման համակարգի սպասարկման գոտում:

*Բնության հատուկ պահպանվող տարածքներ*

### **“Սևան ազգային պարկ”**

Հայցվող տարածքից ուղիղ գծով 700 մ հեռավորության վրա անցնում է Սևան ազգային պարկի սահմանը: Ազգային պարկն զբաղեցնում է Սևանա լճի ամբողջ հայելին և ավամերձ տարածքները: Պարկի ընդհանուր տարածքը՝ Սևանա լճի հայելու հետ միասին, կազմում է 150,1 հազ. հա, այդ թվում 125,3 հազ. հա ջրային մակերես և 24,8 հազ. հա՝ ցամաք:

Պարկը գտնվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության իրավասության ներքո: Ստեղծվել է 1978 թ մարտի 14-ին, ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի թիվ 125 որոշմամբ:

Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման, դիտանցի, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումը իրականացնում է «Սևան ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը: Այն շահույթ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող բնապահպանական, գիտահետազոտական, գիտաճանաչողական կազմակերպություն է, որը գործում է ՀՀ Սահմանադրության, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների, ՊՈԱԿ-ի կանոնադրության և այլ իրավական ակտերի հիման վրա: «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով (15-ը մայիսի 2001 թ.) ազգային պարկի տարածքը ամբողջությամբ մտել է Սևանի էկոհամակարգի Կենտրոնական գոտու մեջ, սահմանվելով որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ:

### **3.7. Սոցիալական պայմանները**

**Ծովինար**, գյուղ Գեղարքունիքի մարզի Մարտունի խոշորացված համայնքում: Ծովինարի գյուղատարածքը ձգվում է Սևանա լճի հարավային ավամերձ գոտում, լճից մոտավորապես 2 կմ հեռավորության վրա, Վարդենիս տանող ճանապարհի մոտ, Երևանից 145 կմ, Մարտունուց՝ 15 կմ հարավ-արևելք: Ըստ 2021 թվականի հողային հաշվեկշռի տվյալների ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար համայնքի (մինչև համայնքների միավորումը) վարչական տարածքի մակերեսը կազմում է 6441.3 հա: Բնակչությունը կազմում է 5104 մարդ: Ծովինարի բնակատեղը ծովի մակարդակից բարձր է ավելի քան 2000 մետրով: Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Սևանա լճից մոտ 7,0կմ հեռավորության վրա:

### **3.8. Պատմամշակութային հուշարձաններ**

Ծրագրի իրականացումը չի կարող ունենալ որևէ բացասական ազդեցություն ոռոգման համակարգերն ընդգրկող բնակավայրերի պատմամշակութային և/կամ հնագիտական հուշարձանների վրա:

Բոլոր աշխատանքներն իրականացվելու են բնակավայրերի բնակելի տարածքներից դուրս՝ արդեն գոյություն ունեցող ոռոգման համակարգերի ուղեգծերում կամ ուղեգծերին զուգահեռ (առավելագույնը 3մ հեռավորության վրա) տարածքներում:

## **4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

### **4.1. Գոյություն ունեցող իրավիճակը**

Ծովինար համայնքի Մեծ առու ջրանցքը սկիզբ է առնում համայնքից մոտ 6.0կմ հեռավորության Արծվանիստ գետի վրա կառուցված բաժանարար հանգույցից: Մեծ առու ջրանցքը ջուր է ստանում նաև Ծովինարի պոմպակայանից:

Ջրանցքի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 8.0կմ, որը որոշ հատվածներում իրենից ներկայացնում է բետոնային, իսկ հիմնականում՝ հողային հունով սեղանաձև կտրվածքով ջրանցք: Շահագործվել է 35-40 տարի, որի ընթացքում ոչ մի կապիտալ վերանորոգման աշխատանքներ չեն կատարվել: Ջրանցքի բետոնային պատերը քայքայված են, չկան ջրաչափական դիտակետեր, ջրթողները քանդված վիճակում են, իսկ ֆիլտրացիոն կորուստները հասնում են մինչև 40%: Այս վիճակով արդյունավետ շահագործումը հնարավոր չէ:

Եվրասիական բանկի Ոռոգման համակարգերի արդիականցման ծրագրի «Ներտնտեսային ոռոգման համակարգերի վերականգնման» բաղադրիչի շրջանակում սույն թվականի սեպտեմբեր ամսին սկսվել են Մեծ առու ջրանցքի սկզբնամասային մոտ 3կմ երկարությամբ հատվածի վերականգնման շինարարական աշխատանքները, որի 10% համաֆինանսավորմը կատարվում է Ծովինար համայնքի կողմից (համաձայն Ծրագրի պայմանի):

«Գեղարքունիք» ԶՕԸ-ի Մարտունու մասնաճյուղից առաջարկություն է ստացվել՝ Մեծ առու ջրանցքն արդյունավետ օգտագործելու և ոռոգման ջուրը խնայելու նպատակով իրականացնել ջրանցքի վերջնամասի 4.8կմ երկարությամբ հատվածի վերականգնման աշխատանքներ: Համայնքից կա նախնական պայմանավորվածություն՝ շինարարական աշխատանքների արժեքի 10% համաֆինանսավորման համար: Սույն Ծրագրով նախատեսվում է վերականգնել ջրանցքի մոտ 4.86կմ ընդհանուր երկարությամբ վերջնամասի հատվածը ստորգետնյա տեղադրմամբ պոլիէթիլենե խողովակաշարերով, որն ավարտվում է Վարդենիկ գյուղի մոտակա տարածքում:

Մեծ առու ջրանցքի իշխման տակ ոռոգման հողերը կազմում են մոտ 356.4 հա, այդ թվում՝ 150 հա փաստացի ոռոգվող հողատարածքներ: Ծովինար համայնքն ունի այնպիսի բարձր նիշերում գտնվող հողեր, որոնք ոռոգվում են խորքային հորերով: Հետևաբար նպատակային է համարվում ջրանցքը վերականգնել փակ խողովակներով, ինչի արդյունքում հնարավոր կլինի ինքնահոս ջրով ոռոգելի դարձնել նաև բարձր նիշերում գտնվող վարելահողերը: Խողովակաշարի կառուցումը հնարավորություն կտա հանել շահագործումից այն խորքային հորերը, որոնք ոռոգում են բարձրադիր հողեր և դրանով իսկ տարեկան խնայվի մոտ 12 հազար կվտ/ժամ էլեկտրաէներգիա: Բացի այդ, վերականգնման

աշխատանքների արդյունքում կանխատեսվում է տարեկան շուրջ 406.4 հազար իւ. մ. ռոռզման ջրի տնտեսում և մոտ 182 հազար կվտ/ժամ էլեկտրաէներգիայի տնտեսում՝ Ծովինարի պոմպակայանից: Նախնական հիդրավիկական հաշվարկները ցույց են տալիս, որ 350 մմ տրամագծով խողովակաշարի միջոցով հնարավոր է տեղափոխել անհրաժեշտ քանակի ջուրը:

#### **4.1.1. Նախատեսվող աշխատանքները**

Ծովինար համայնքի Մեծ առու ջրանցքի վերակառուցման նպատակով նախատեսվում է ջրանցքի ներկայումս կառուցվող հատվածի ուղեգծի վերջնակետից Փ355մմ տրամագծի ստորգետնյա տեղադրմամբ պոլիէթիլենե խողովակներով ջրանցքի կառուցում 4.86կմ ընդհանուր երկարությամբ:

Նախատեսվող ստորգետնյա տեղադրմամբ պոլիէթիլենե խողովակներով ջրանցքի ուղեգծի սկզբնամասի շուրջ 2.0կմ հատվածը նախատեսված է կառուցել նոր ուղեգծով՝ դաշտամիջյան ճանապարհների եզրերով, իսկ մնացած շուրջ 2.86կմ հատվածը՝ գոյություն ունեցող ջրանցքի ուղեգծին հարող համայնքապատկան տարածքներով:

Ջրանցքի վերականգնման նպատակով ընդհանուր առմամբ նախատեսված են հետևյալ լուծումները.

- Մագիստրալ Մ-1, Փ355մմ տրամագծի ստորգետնյա տեղադրմամբ պոլիէթիլենե խողովակներով ջրանցքի կառուցում՝ 4605մ ընդհանուր երկարությամբ, որի շնորհիվ կբարելավվի ջրանցքի իշխման տակ գտնվող հողերի լիարժեք ռոռզումը:
- Ճյուղ Ճ-1, 257մ ընդհանուր երկարությամբ Փ160մմ տրամագծի ստորգետնյա տեղադրմամբ պոլիէթիլենե խողովակների կառուցում՝ առկա քայքայված ջրանցքի ուղեգծում:
- 5 հատ նոր ջրթողների կառուցում:
- Խողովակները տեղադրվում են ստորգետնյա մշակված խրամուղիներում, որոնք քանդվում են նախագծում ներկայացված լայնական կտրվածքներին համապատասխան: Խողովակները տեղադրվում են ավազի 10սմ նախապատրաստական հիմքի վրա, ծածկվում D+20սմ ավազի պաշտպանիչ շերտով: Խրամուղու ետլիցքը մշակված փափուկ գրունտներից պարտադիր նախատեսված է իրականացնել տոփանումով՝ 15սմ շերտերով:

Ստորև աղյուսակ 4-ում ներկայացված են ստորգետնյա տեղադրված խողովակաշարերի հողային աշխատանքների ծավալներն էքսկավատորով և ձեռքով գրունտների մշակման նկարագիրը և այլն:

<<	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	Միավորի արժեքը, ՀՀ դրամ	Ընդհանուր արժեքը, ՀՀ դրամ
1	2	3	4	5	6
	<b><i>1. Հողային աշխատանքներ</i></b>				
1.1	Ճանապարհի սյուժիլավորում b=4մ լայնությամբ	մ	1200.00		
1.2	Փափուկ բնահողերի կտրում և լիքի իրականացում տոփանումով	մ <sup>3</sup>	2446.00		
1.3	Բուսահողի քանդում տեղափոխումով մինչև 20ն ժամանակավոր կուտակումով	մ <sup>3</sup>	129.00		
1.4	Փափուկ բնահողերի քանդում (մեխանիզմով, ձեռքով, ազատ տարածքում և գոյություն ունեցող կառուցվածքների երկայնքով )	մ <sup>3</sup>	3762.35		
1.5	Փափուկ բնահողերի քանդում (մեխանիզմով, ձեռքով, ազատ տարածքում և գոյություն ունեցող կառուցվածքների երկայնքով ), բարձունով և տեղափոխումով մինչև 7կմ թափոնավայր	մ <sup>3</sup>	15.60		
1.6	Փափուկ բնահողերի քանդում ձեռքով կողիցքով	մ <sup>3</sup>	230.00		
1.7	Կիսաժայռային բնահողերի քանդում (մեխանիզմով, ձեռքով, ազատ տարածքում և գոյություն ունեցող կառուցվածքների երկայնքով )	մ <sup>3</sup>	19.80		
1.8	Ժայռային բնահողերի քանդում նախնական փխրեցումով (մեխանիզմով, ձեռքով, ազատ տարածքում և գոյություն ունեցող կառուցվածքների երկայնքով )	մ <sup>3</sup>	2.00		
1.9	Ժայռային բնահողերի քանդում նախնական փխրեցումով (մեխանիզմով, ձեռքով, ազատ տարածքում և գոյություն ունեցող կառուցվածքների երկայնքով ), բարձունով և տեղափոխումով մինչև 7կմ թափոնավայր	մ <sup>3</sup>	3813.45		
1.10	Նախապատրաստական շերտի ստեղծում 10սմ հաստ. ավազից, ներառյալ ավազի արժեքը, մատակարարումը	մ <sup>3</sup>	356.20		

1.11	Նախապատրաստական շերտի ստեղծում 10սմ հաստ. խճից, ներառյալ խճի արժեքը, մատակարարումը	մ <sup>3</sup>	9.55		
1.12	Նախապատրաստական շերտի ստեղծում 10սմ հաստ. ավազակույճից, ներառյալ ավազակույճի արժեքը, մատակարարումը	մ <sup>3</sup>	0.65		
1.13	Նախապատրաստական շերտի ստեղծում 10սմ հաստ. օգտակար հանույթի փափուկ բնահողերից տոփանումով	մ <sup>3</sup>	0.65		
1.14	Պաշտպանիչ շերտի ստեղծում ավազից, տոփանումով, ներառյալ ավազի արժեքը, մատակարարումը	մ <sup>3</sup>	1979.40		
1.15	Հետլիցքի իրականացում օգտակար հանույթի բնահողերից, տոփանումով	մ <sup>3</sup>	4000.20		
1.16	Հետլիցքի իրականացում ավազակույճային գրունտով, տոփանումով, ներառյալ ավազակույճի արժեքը, մատակարարումը	մ <sup>3</sup>	970.00		
1.17	Ժամանակավոր կուտակված բուսանողի տեղափոխում մինչև 20սմ և վերականգնում / հետլիցք հարթեցումով/	մ <sup>3</sup>	129.00		
1.18	Քարե լիցքի իրականացում, ներառյալ քարի արժեքը, մատակարարում	մ <sup>3</sup>	6.73		
1.19	Ավելորդ բնահողերի հարթեցում տեղում	մ <sup>3</sup>	13.30		

## 4.2. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ

### 4.2.1. Շինարարության կազմակերպման համառոտ նկարագիր

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ համապատասխան շինարարական մեքենաների ու մեխանիզմների կիրառմամբ:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի ոռոգման համակարգերի տարածքներ նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհներով, իսկ շինարարության նյութատեխնիկական մատակարարումն իրականացնել լիցենզավորված շինարարական կազմակերպություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- շաղախը և բետոնը կառաքվեն մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը կկազմակերպվի այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:

- հավաքովի ե/բ կոնստրուկցիաների էլեմենտների պատրաստման համար նախատեսվում է տրվում օգտագործել հարակից տարածքների շինարարական արդյունաբերության հզորությունները:

- առանձին մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:

Հողային աշխատանքների հաշվարկն իրականացվել է համաձայն երկրաբանական կտրվածքների: Նախատեսվող գործունեության ժամանակ առաջացող թափոնները հիմնականում 4-րդ և 5-րդ դասի են (համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության (այդ թվում ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն հրամանի): Դրանք իրենցից ներկայացնում են շինարարության խառը թափոններ (3990130001005), ոչ պիտանի հանույթը և հողային աշխատանքների դեպքում հողային, ավազային շլամը (3160250004004), ինչպես նաև շինարարական աշխատանքներում ներգրավված անձնակազմի կողմից առաջացրած կենցաղային աղբը: Վերջիններիս ընդհանուր քանակները շինարարության ողջ ընթացքի համար, բերված են աղյուսակ 4.1.–ում:

**Աղյուսակ 4.1. Հողային աշխատանքների ծավալներն ու առաջացած թափոնների քանակը**

Ոռոգման համակարգի անվանումը	Խրամ. քանդման ընդհ. մակերեսը, մ2	Հանույթ, մ3	Ետլիցք, մ3	Ավելցուկային գրունտ, մ3	բուսահող, մ3	Կենցաղ. աղբի կանխատեսվող տարեկան քանակ, կգ
Ծովինար համայնքի Մեծ առու ջրանցք	7050	7641	4591	3050	129	380

Շինարարական աղբի փաստացի քանակի որոշումը և ծավալաթերթով նախատեսված վճարումը հնարավոր է իրականացնել միայն տեղամասի տեխնիկական հսկողություն իրականացնող ինժեների և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության համաձայնության դեպքում:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված



բեռնատարներով:

Կենցաղային աղբի կուտակման համար շին. հրապարակն ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Շինարարության և շահագործման փուլում առաջացած կենցաղային աղբը աղբահավաք ծառայության կողմից կտեղափոխվի մոտակա աղբավայր:

Շինարարության նորմատիվ տևողությունը, որը այս ծրագրում ընդգրկված ոռոգման բոլոր համակարգերի համար կազմում է ընդհանուր 17 ամիս, որոշվել է հաշվի առնելով օբյեկտների նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագրերն ու շինարարության ընդհանուր ծավալը:

Այս ժամանակահավածը ներառում է նաև վեգետացիոն ժամանակահատվածը և շինարարության հնարավոր ընդհատումները՝ պայմանավորված ցուրտ եղանակային պայմաններով:

Շինարարական աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում կլինի տեղական համայնքներից ներգրավված համապատասխան որակավորում ունեցող մասնագետների բրիգադ: Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի: Ոռոգման համակարգերում շինարարության ընդհանուր ղեկավարությունը կիրականացվի տեղամասի պետերի և աշխղեկների կողմից:

Աշխատանքների կատարման համար նախատեսվում է օգտագործել հետևյալ մեքենաները և մեխանիզմները.

*Աղյուսակ 4.2. Հիմնական մեքենաների և մեխանիզմների մոտավոր քանակություն*


Հ/Հ	Մեքենաների և մեխանիզմների անվանում	Մեքենաների մակնիշը և տիպը	Քանակ, հատ
1	Ավտոինքնաթափ	բեռնատվ. 10տ	3
2	Ավտոբետոնախառնիչ	տարողությունը 2մ <sup>3</sup>	1
	Ավտոբետոնապոմպ	արտադրողականությունը 10մ <sup>3</sup> /ժամ	1
3	Ավտոամբարձիչ	բեռնատվ. 25տ	1
4	Բուլդոզեր	հզորությունը 59-96կՎտ	1
5	Կոմպրեսոր	արտադ-յունը 10մ <sup>3</sup> /րոպե	1
6	Հետահար մուրճ	ՄՕ-10	2
7	Ձեռքի պնեվմատոփիչ	40կգ	2
8	Էքսկավատոր	նեղ շերեփ և 0.65մ <sup>3</sup>	1
9	Խորքային վիբրատոր	ԻՎ	2
10	Զողման ապարատ պողպատի համար	-	4
11	Ասֆալտբետոն տեղադրիչ մեխանիզմների լրակազմ	-	1
12	Ավազաշիթային , կամ կոտորակաշիթային սարքավորում	-	2
13	Սարքավորում դյուկերի խողովակի հակակորոզիոն ծածկույթի ստեղծման համար	-	2

Աղյուսակ 4.3. Ժամանակավոր շինարարական տնտեսության շենքերի և շինությունների ցուցակ

n/n	Անվանում	Քանակ	Չափեր, մ	Ծախսվող էներգ. կՎտ	Ծանոթագրություն
1	Աշխեկի գրասենյակ	1	8.6 x 3.1	6	կոնտեյներային
2	Գործիքների պահեստ	2	6.7 x 3.0	6	կոնտեյներային
3	Մեխանիկական արհեստանոց	2	7.25 x 2.9	7.2	կոնտեյներային
4	Հանդերձարան չորանոցով	2	6.7 x 3.0	7.22	շարժական
5	Մեկ տեղանոց զուգարան	1	D 1.3	1	-
6	Բուժ. կետ	1	10.0 x 2.4	7.7	կոնտեյներային
7	Կիսաձածկ պահեստ	2	10.0 x 5.0		-
8	ՇԷԿ- 30 հարկ եղած դեպքում	4	2.3 x0.89		AD-30C-PM1
9	ՇԷԿ – 60 հարկ եղած դեպքում	2	2.7 x1.95		AD-50C-P


Ստորև բերված է շինարարության գլխավոր հատակագիծը, շինարարության տարբեր գործառույթների և սխեմաների նկարագրությամբ:

**ԳԵՆԱՐՈՒՐԻՔԻ Մ ԱՐՈՒՐ**  
**ՇՈՒԽԱՐ ԱՅԱՆՅԵՒ ՎԵՐԱԿՆԵՐ ՊԻՆՁԵՐԻ**  
**ԱՌԱՎ ԱՎԵՐՎԱԳԱՆԱՆ ՎՅՎԱԾՆԵՐԻ ՈՐԻԵՐՁԵՐ**  
**ԳԼԽԱՎՈՐ ԸՆԿԱՐԱՐԱՆԱՆ ԳՆԱՅԱԿԻՑ**  
**Մ 1:10000**



*Վաճառանկարի մասնաբաժնի շահագրգռողները*

ԸՆ.	Մասնակցի անուն	Վճարում	Վճարի օրը	Գնի քանակը, հա.	Գնի գումարը, ՀՀ դր.
1.	ՄԱՅՐԱՆԻՍ ԼՍԱՄԵՂԻԱՆ	2	2017.06.01	5	100 000 000
2.	ՄԱՅՐԱՆԻՍ ԼՍԱՄԵՂԻԱՆ	3	2017.06.01	5	100 000 000
3.	ՄԱՅՐԱՆԻՍ ԼՍԱՄԵՂԻԱՆ	4	2017.06.01	5	100 000 000
4.	ՄԱՅՐԱՆԻՍ ԼՍԱՄԵՂԻԱՆ	5	2017.06.01	5	100 000 000
5.	ՄԱՅՐԱՆԻՍ ԼՍԱՄԵՂԻԱՆ	6	2017.06.01	5	100 000 000
6.	ՄԱՅՐԱՆԻՍ ԼՍԱՄԵՂԻԱՆ	7	2017.06.01	5	100 000 000
7.	ՄԱՅՐԱՆԻՍ ԼՍԱՄԵՂԻԱՆ	8	2017.06.01	5	100 000 000
8.	ՄԱՅՐԱՆԻՍ ԼՍԱՄԵՂԻԱՆ	9	2017.06.01	5	100 000 000
9.	ՄԱՅՐԱՆԻՍ ԼՍԱՄԵՂԻԱՆ	10	2017.06.01	5	100 000 000
10.	ՄԱՅՐԱՆԻՍ ԼՍԱՄԵՂԻԱՆ	11	2017.06.01	5	100 000 000



- 1. Մասնաբաժնի վաճառքի գինը 50 000 000 ՀՀ դր. է, որը հավասարապես բաժանվում է 5 մասնաբաժնի վրա:
- 2. Մասնաբաժնի գինը 50 000 000 ՀՀ դր. է, որը հավասարապես բաժանվում է 5 մասնաբաժնի վրա:
- 3. Մասնաբաժնի գինը 50 000 000 ՀՀ դր. է, որը հավասարապես բաժանվում է 5 մասնաբաժնի վրա:
- 4. Մասնաբաժնի գինը 50 000 000 ՀՀ դր. է, որը հավասարապես բաժանվում է 5 մասնաբաժնի վրա:
- 5. Մասնաբաժնի գինը 50 000 000 ՀՀ դր. է, որը հավասարապես բաժանվում է 5 մասնաբաժնի վրա:
- 6. Մասնաբաժնի գինը 50 000 000 ՀՀ դր. է, որը հավասարապես բաժանվում է 5 մասնաբաժնի վրա:
- 7. Մասնաբաժնի գինը 50 000 000 ՀՀ դր. է, որը հավասարապես բաժանվում է 5 մասնաբաժնի վրա:

**Մասնաբաժնի վաճառքի գինը**  
 1. Մասնաբաժնի վաճառքի գինը 50 000 000 ՀՀ դր. է, որը հավասարապես բաժանվում է 5 մասնաբաժնի վրա:  
 2. Մասնաբաժնի վաճառքի գինը 50 000 000 ՀՀ դր. է, որը հավասարապես բաժանվում է 5 մասնաբաժնի վրա:  
 3. Մասնաբաժնի վաճառքի գինը 50 000 000 ՀՀ դր. է, որը հավասարապես բաժանվում է 5 մասնաբաժնի վրա:  
 4. Մասնաբաժնի վաճառքի գինը 50 000 000 ՀՀ դր. է, որը հավասարապես բաժանվում է 5 մասնաբաժնի վրա:  
 5. Մասնաբաժնի վաճառքի գինը 50 000 000 ՀՀ դր. է, որը հավասարապես բաժանվում է 5 մասնաբաժնի վրա:  
 6. Մասնաբաժնի վաճառքի գինը 50 000 000 ՀՀ դր. է, որը հավասարապես բաժանվում է 5 մասնաբաժնի վրա:  
 7. Մասնաբաժնի վաճառքի գինը 50 000 000 ՀՀ դր. է, որը հավասարապես բաժանվում է 5 մասնաբաժնի վրա:

- Պայմանական նշաններ**
- Պայմանական կառուցվող արտադրանքի հարողականատու:
- Պայմանական նոր հարկապահային բաժանարար:
- Պայմանական նոր մանրաբաժնի հրատված:
- Սակ քաղաքացիական:
- Մասնաբաժնի շահագրգռողների տնտեսություն:

**Վերաբերվող ՀՕԵ-ի սպասարկման տնտեսի Գնադրույթի մարտի Շուկան հասանքի մեծ առաջ քանակի վերականգնող հիմնական գումարներ**

				Միավորը 1
Տնտեսի ձևը	Սպասարկման համար	Վերաբերվող համար	Վերաբերվող համար	Գումարը
1	143.00	143.00	143.00	4.832

ԴՆԱԾ	ԿԱՐԴԱԿՈՒՄ	ԱՍՏՈՎՈՒՄ	ՊԵՐՅԱԿ
ԿՐԻ	ԿՐԻ	ԿՐԻ	ԿՐԻ

*Շինարարության տևողությունը*

- Բնահողերի քանդում –  $11480\text{մ}^3:139=83:25=3.5\text{ամիս}$
- պոլիէթիլենե խողովակների մոնտաժ –  $5723\text{մ}^3:34=168:25=7\text{ամիս}$

Շինարարության ընդհանուր ժամկետը կկազմի՝  $7+3.5*0.3=7+1.05+3\text{այլ}$  աշխատանքեր և նախապատրաստական շրջանը= $11\text{ամիս}$ , ներառյալ վեգետացիոն ժամանակահատվածը և հնարավոր, ձմեռային սուղ պայմաններից ելնելով, շինարարության ընդհատումները: Շինարարության ընթացքում կապալառուն վեգետացիոն հատվածը ընդունում է որպես տեխնիկական ընդմիջում:

*Աշխատուժի քանակը*

Շինարարության աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում պետք է լինի բարձր որակավորում ունեցող մասնագետների բրիգադ, ներառյալ էլեկտրագողողներ և բետոնագործներ:

Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի:

Շինարարության ընդհանուր ղեկավարությունը իրագործվելու է տեղամասի պետի և աշխեկի կողմից:

Աշխատուժի ընդհանուր քանակը – 26 հոգի ներառյալ օժանդակ կառույցների աշխատողները

**4.3. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում**

Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է օգտագործել բետոնային խառնուրդ, ամրաններ, ջրամեկուսիչ նյութեր, եռակցման էլեկտրողներ և այլն: Նյութերի ցանկը և քանակները կներկայացվեն աշխատանքային նախագծում:

Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ փոշենստեցման և աշխատողների կենցաղային կարիքների համար:

Ջրապահանջի ստույգ ծավալները նույնպես կներկայացվեն նախագծի կազմում: Այստեղ ներկայացվում են մոտավոր քանակներ:

*Խմելու տնտեսական՝*

$$26 \text{ մարդ} \times 0.025 \text{ լ/մարդ/օր} \times 17 \text{ ամիս} \times 22 \text{ օր/ամիս} = 234.1 \text{ մ}^3 \text{ կամ } 0.65 \text{ մ}^3/\text{օր}:$$

Խմելու ջուրը մատակարարվելու է 20 լ բալոններով:

*Ջրցան*

Միջին օրական ջրապահանջը գնահատվում է 1.2 մ<sup>3</sup>, տաք և առանց տեղումների օրերի թիվը՝ 190, ընդամենը ջրապահանջը՝ 228 մ<sup>3</sup>:

Տեխնիկական ջուրը մատակարարվելու է մոտակա ոռոգման ցանցից, ջրատար մեքենաներով, համայնքի հետ պայմանագրի հիման վրա:

## 5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

### 5.1. Բնապահպանական ու սոցիալական ռիսկերը

Ոռոգման համակարգերի բարելավմանն ուղղված աշխատանքները բնապահպանական և սոցիալական տեսանկյունից պարունակում են ցածր ռիսկեր: Ծրագրի իրականացումը որևէ անդառնալի ազդեցություն չի ունենա շրջակա միջավայրի վրա: Տեղայնացված որոշ բացասական ազդեցություններ կանխատեսվում են շինարարության փուլում, սակայն դրանք կունենան սահմանափակ ազդեցություն և կկրեն ժամանակավոր բնույթ:

Շինարարարության ընթացքում կառաջանան փոշու արտանետումներ՝ հողային աշխատանքների ժամանակ, ազոտի, ածխածնի և սսբի օքսիդների արտանետումներ և աղմուկի մակարդակ ավելացում՝ շինարարական և տրանսպորտային միջոցների շահագործման ժամանակ:

Շինարարական թափոնների առաջացում աշխատանքների ամբողջ ընթացքում:

Ոռոգման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացման տարածքներում /ծրագրի ազդեցության գոտում/ բնական լանդշաֆտների, մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների, հողային ռեսուրսների, ինչպես նաև բուսական ու կենդանական տեսակների վրա բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում:

Ծրագրով նախատեսված աշխատանքները ներառում են արդեն գոյություն ունեցող ոռոգման համակարգերի վերականգնման աշխատանքներ, որոնք իրականացվելու են նախկինում շինարարություն իրականացված տարածքներում՝ ընկած բնակելի տարածքներից դուրս: Նախատեսվող գործունեության իրականացման համար այլ տարածքներ չեն ընդգրկվելու, հետևաբար դրանց ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն՝ կրելով ժամանակավոր բնույթ:

Բոլոր շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել համայնքային նշանակության տարածքներում, որոնց վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կան տրված համապատասխան թույլտվություններ:

Նախագծի իրականացման տարածքներում /ազդեցության գոտում/ բացակայում են բնապահպանական տեսանկյունից խոցելի կամ բնության հատուկ պահպանվող տարածքները, ինչպես նաև պատմամշակութային արժեքները:

Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները նկատելի դրական ազդեցություն կունենան բնակչության սոցիալական վիճակի վրա: Արդյունքում



ռոռզման համակարգերի բարելավման տարածքներում կբարելավվի բնակչության կյանքի որակը՝ խթան հանդիսանալով տեղի բնակչության սոցիալական-տնտեսական պայմանների բարելավման համար:

Վերականգնման աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվում են հետևյալ դրական ազդեցությունները.

- ջրակորուստների կրճատում, ջրային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում, պահպանություն և կառավարում,
- բնակիչների կենսամակարդակի բարելավում՝ պայմանավորված ռոռզման ջրի հասանելիությամբ և ռոռզելի հողատարածքների ավելացմամբ,
- ռոռզման ջրի սպառման արդյունավետության բարձրացում,
- բնակչության սոցիալական-տնտեսական պայմանների բարելավում:

Ակնկալվում է, որ մեղմացման միջոցառումների իրականացման արդյունքում զգալի մնացորդային ազդեցություններ չեն լինի:

Կապալառուն, շինարարը, հսկող և վերահսկող մարմինները պետք է խստորեն հետևեն ՇՄԿՊ-ով նախատեսված բնապահպանական մեղմացման միջոցառումների պատշաճ իրականացմանը:

## **5.2. Բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումներ**

Նախատեսվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին նախատեսվում է ապահովել, համաձայն բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ): ԲԿՊ-ն պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

